Տեղեկանք

փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2001 թվականի մայիսի 2-ի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի (այսուհետ՝ ~~ե~~Օրենսգիրք) 20-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բնապահպանական հողեր են համարվում բնական, գիտական, գեղագիտական, հանգստի նշանակություն ունեցող և հատուկ պահպանության նպատակով նախատեսված բնության հատուկ պահպանվող տարածքների հողերը, ինչպես նաև բուսաբանական այգիների, անտառպարկերի և դենդրոպարկերի հողերը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «անտառապարկերով,» բառը~~։~~:

Հոդված 3. Օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) բնության հատուկ պահպանվող տարածքների, պատմության և մշակույթի հուշարձանների, դրանց պահպանման գոտիների, ինչպես նաև էկոլոգիական միջանցքների, կենսոլորտային ~~պահպանավայրերի~~տարածքների, կանաչապատ տարածքների, բուսաբանական այգիների, անտառպարկերի և դենդրոպարկերի պահպանության~~ն ու~~ը և օգտագործմանն ուղղված միջոցառումների իրականացումը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի~~՝~~՝

1) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) բնապահպանական պահանջների պահպանման կամ որոշակի աշխատանքներ կատարելու, ներառյալ՝ բնության հատուկ պահպանվող տարածքները, Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքումերում գրանցված բույսերի ~~և կենդանիների գոյության պայմանները~~աճելավայրերը և կենդանիների ապրելավայրերը, էկոլոգիական միջանցքները, կենսոլորտային տարածքները, վայրի կենդանիների միգրացիոն ուղիները, հողաշերտը, պատմության և մշակույթի հուշարձանները, կանաչապատ տարածքները (բնական աճող կամ արհեստականորեն տնկված ծառերի, թփերի ու խոտաբույսերի ամբողջություն), բուսաբանական այգիները, անտառպարկերը (տեղանքին բնորոշ, ներմուծված, արժեքավոր բուսատեսակների պահպանության, բնական վերարտադրության և օգտագործման համար առանձնացված տարածք), դենդրոպարկերը~~,~~ և հնէաբանական օբյեկտները պահպանելու պայմանով,»,

2) ուժը կորցրած ճանաչել 13-րդ կետը:

Հոդված 5. Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) բնության հատուկ պահպանվող տարածք~~ներ են~~ների, անտառային հող~~եր~~երի, բուսաբանական այգիներ~~ովի~~, անտառպարկեր~~ովի~~ և դենդրոպարկեր~~ով զբաղեցրած~~ի հողեր են, ինչպես նաև այդ նպատակների համար պահեստավորված ~~տարածքներ են~~հողեր,»:

Հոդված 6. Օրենսգրքի 76-րդ հոդվածը լրացնել նոր՝ 6-րդ մասով~~,~~՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Պետական սեփականություն հանդիսացող բնապահպանական հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ներդրումային ծրագրերի հիման վրա:»:

Հոդված 7. Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Շրջակա միջավայրի ոլորտի լիազոր մարմինը Կառավարության սահմանած կարգով տրամադրում է անտառները և անտառային հողերը՝ օգտագործման, ~~ինչպես նաև~~իսկ բնության հատուկ պահպանվող տարածքների ~~(բնապահպանական հողերի) հողամասերը~~ ~~(~~բնապահպանական հողերը, բացառությամբ համայնքային սեփականություն հանդիսացող

բնության հատուկ պահպանվող տարածքների հողերի~~)~~՝ վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով~~ տրամադրում է շրջակա միջավայրի ոլորտի լիազոր մարմինը՝ կառավարության սահմանած կարգով~~:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: